ՀԻԱՈՒՐԹՅՈՒՆ

Քաղաքային «Կումայրի» թերթի հավելված

1991 թ. օգոստոս № 40: Գինը՝ 50 կոպ.

Լուսանկարը՝ ՀՄ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ



Լուսանկարը՝ Ա. ՄԱԿԱՐՅԱՆԻ

Դեկտեմբերյան օրերի խրոնիկա

ԵՐԲԵՔ ՉԻՆՔ ՄՈՌԱՑՎԻ

Վաղուց համակրում եմ հայ ժողովրդին՝ նրա իմաստնության, խիզախության ու քաջության, կենսունակության ու հպարտության համար։ Ահա թե ինչու Հայաստանում տեղի ունեցած արհավիրքը ես ընդունեցի որպես իմ անձնական ողբերգությունը։ Խոնարհում եմ գլուխս երկրաշարժի անմեղ զոհվածների ու տուժածների առջև։

Տուժածների օգնության ֆոնդում ես կատարել եմ իմ համեստ ներդրումը՝ Մոսկվայում վերջերս կայացած իմ երկու ստեղծագործական երեկոյի 1500 ռուբլի հոնորարը փոխանցել եմ այդ ֆոնդին։ Հասկանում եմ, որ կատարված աղետի համեմատ դա ոչինչ է։ Ինչևէ, պետք է ապրել։ Իսկ դրա համար անհրաժեշտ է անել ամեն բան, հանգես բերել ուժեղ կամք, համբերություն, որպեսզի բուժվեն հայ բազմաչարչար ժողովրդին հասցրած բնության ահավոր աղետի հետևանքները։ Հավանաբար ոչ ոք չի մոռանա այդ վերքերը։

Երբեք չեն մոռացվի այդ վերքերը։

ՄԻԽԱՅԼ ՇԱՏՐՈՎ

Դրամատուրգ

17 դեկտեմբերի 1988 թ.

Լուսանկարները՝ Ս. ԳՈՒԼՅԱՆԻ

ԿՈՅՈՒՄԸ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺ

Մայրերից յուրաքանչյուրը գրկել էր իր զավակին։ ՀԱՍՄԻԿԸ՝ իր միակ 5-ամյա ԱՇՈՏԻԿԻՆ, ԱՐԵՎՀԱՏ ԱՎԱԳՅԱՆԸ՝ 36-ամյա ՀԱՍՄԻԿ ԱԴԱՄՅԱՆ դստերը։ Այսպես նրանք գտնվեցին իրենց վերջին ու հավերժ գրկախառնման 8-րդ օրը, ծածկասալի տակ։

Սիրված ուսուցչուհի, լավ մերոդիստ էր Հասմիկը, այն առանձնահատուկ բնավորությունններից, որոնք մոլեռանդ սիրով են կապվում իրենց ընտրած գործին։ Նա իր կոչմամբ արժանացավ մարդկանց առանձնահատուկ վստահության ու հարգանքին։

Հասմիկը կարողանում էր կյանքն ընկալել իր ամբողջության մեջ՝ և՛ բերկրանք, և՛ թախիծ, պայքար, ընդվզում, և զուսպ մտասևեռում։ Բայց ոչ երբեք չարություն ու ատելություն։ Նրա բնավորության գիծն էր, որ նրան այնպես անկեղծ սիրով փարվում էին իր աշակերտները և արժանին հատուցում գործընկերները ու հարազատները։

Եթե այսօր նա մեզ հետ լիներ, պետք է կոչեր ապրողներիս անունից.

—Անիծվեն նրանք, ովքեր իրենց բանականությունը, գութն ու խիղճը կորցրեցին, նրանք, ովքեր տան փոխարեն ավերակներ են կառուցում, և նրանք, ովքեր գիշատիչ շահամոլությամբ քաջալերում են ավազակաբարո կողոպտիչներին՝ ավերակներ և ոչ թե տներ կառուցելու։

ՏԻԳՐԱՆ ԱՎԱԳՅԱՆ

ՀԵՂԻՆԵ ՎՐՈՒՅՐԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ ծնվել է 1954 թ.։ Սովորել է № 21 միջնակարգ դպրոցում։ Ընդունվել և ավարտել է Թբիլիսի արդյունաբերական տեխնիկումը։ «Մտրոմմաշինա» գործարանում գծագրող-կոնստրուկտոր էր։ Ամուսնացել էր, ուներ 2 երեխա։

1982 թ. բնակարան է ստացել Գերցենի փողոցում։ Թե տանը մեջ և թե շրջապատում խնդալցի էր, համեստ։ Իր ընտանիքին նվիրված կին էր։ Հարազատները խոր կսկիծով են հիշում նրան, անընդհատ կրկնելով՝ «Մի մատ, հազար հունար»։ Հեղինեն այդ օրը աշխատանքի մեջ էր։ Լույսերը մարում են և մոտ 11-ն անց 30-ին ուղարկում են վերելակը ստուգելու ու նախաճաշի։

Մուշտակը գցած ուսերին բարձրացել է վերև և անզոր է գտնվել 9-րդ հարկից փախչելու։ Հինգ օր փլատակների քանդելուց հետո գտան։

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻԼՎԱ ՎՐՈՒՅՐԻ

Ծնվել է 1955 թ., սովորել և ավարտել է հաստոցաշինական տեխնիկումը։ Աշխատել է Հղկող հաստոցների գործարանում։ Ամուսնացած էր։ Սակայն բախտը չժպտաց, բաժանվեցին։ Երբ տղան մեկ տարեկան էր, ընդունվեց աշխատանքի «Մագնիսահաղորդիչների» գործարանում՝ որակի տեխհսկիչ։ Նորից ընտանիք կազմեց։ Ուներ երկու երեխա։ Գործարանում 10 տարի է հանդիսանում էր բնակարանի կարիքավոր, սակայն նրան չընդառաջեցին։ Ստիպված գնաց Սպիտակ քաղաքի կարի ֆաբրիկա։ Դեռ չէին հասցրել սարքի բերել նոր ստացած 3 սենյականոց բնակարանը, երբ վրա հասավ աղետը և զոհվեց։ Որտեղ որ աշխատել է, նրան սիրել ու հարգել են իր համեստ և խելացի, նաև կամեցող բնավորության համար։ Հեղինեն և Սիլվա քույրերը հանգչում են միասին, կողք-կողքի, ցավալիության ամենալավ տարիքում, երբ դեռ նոր պիտի ուրախանային իրենց բալիկներով։

Նրանց փոքր քույրը՝

ԳԱՅԱՆԵ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

ԷԼԼԱԴԱ ԳԱԳԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ

Փոքրիկ մի աղջիկ՝ կլոր, զարմացած աչքերով, ասես աշխարհն էր ուզում միանգամից ճանաչել։ Միշտ ժպտում էր բոլորին, ուրախանում ամեն նոր իմացածի, սովորածի համար։ Թռչկոտում էր զարնան թիթեռնիկի նման... Որքան լավ է, որ ծնվել էր այս աշխարհում ապրելու համար։ Լավ է որ կա մայրիկը, հայրիկը, քույրը, այս բակը, երեխաները։ Արևի հետ վեր էր թռչում, ապրում չարաճճի իր խաղերով, դպրոց գնում, դաս անում...

...Վերջին օրը չես հաշտվում այդ մտքի հետ, բայց նա չկա։ Մայրը վաղ էր արթնացել, համեղ թխվածքներ էր պատրաստել, մեծ քույրիկի՝ Լիլիթի ծննդյան օրն էր, համադասարանցիներն էին գալու։ Ամենքից շատ Էլլադան էր ուրախացել, նույնիսկ դպրոց չէր ուզում գնալ, դասը չէր սովորել։ Բայց երբ բակից ընկերուհիները կանչեցին, պայուսակը վերցրեց ու վազեց նրանց հասնելու։ Որքան ուրախ էին երեխաները... Նրանցից ովքե՞ր վերադարձան, չգիտեմ, իսկ Էլլադան՝ նրա քաղցր ժպիտն ու զվարթ ծիծաղը դարձան հիշողություն։

Վերջին օրը Էլլադային գտան 9-րդ դպրոցի առաջին դասարանցիների հետ... Մնացել է սուրբ մասունք դարձած այս լուսանկարը, որ ժպտում է աղջիկը։

ՉԵԼԵՐՅԱՆ ՎԵՐԳԻՆԵ

Վերգինե տատիդ սպասումն էր՝ «Ծանից դուրս գալիս՝ խաչակնքիր, և Աստված քեզ բարի աչքով կնայի...»։

Այն մահաշունչ օրը վատատրամ ու անտրամադիր էիր դու այնքան, որ չէիր ուզում դպրոց գնալ։ Դժկամությամբ վերցրիր պայուսակդ և մայրիկիդ այն հիշեցմանը, թե խաչակնքեկն ինչու մոռացար, ձեռքդ անհույս թափահարեցիր օդում։

Մինչև հիմա էլ եղբայրդ՝ Ալբերտը, ցավով հարցնում է. իսկապես ինչո՞ւ չխաչակնքեցիր...

Հիմա Հովհաննես ու Նարեկ եղբայրներդ մայրիկիդ ձեռքը բռնած նայում են քո սեղանագործական աշխատանքներդ՝ կարոտով, ափսոսանքով։ Դիտում եմ և ես ու հուզմունքը խեղդում է ինձ։ Փորձում եմ խոովքս թաքցնել, որ բռնկված հուզմունքի նոր ալիքով չբորբոքեմ դառնընկերուհուս վշտացավ սիրտը...

Ինչքան էիր նվագում դաշնամուրի վրա։ Մտածում էինք, որ «Լենչին» արեստի երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժնից ուսումնարան կգնաս։ Անահիտ ընկերուհուս և շատերիս սպարծանքն էիր, Վերգինե, դու պայծառ ու բարի աղջիկ։

Ա. Պետրոսյանի անվան դպրոցի փլատակներից հանեցին երեք օր անց։ Աստված իմ, ինչպես էիր փոխվել, ճանաչեցին միայն պայուսակիդ մեջ եղած այն տուփով, որի մեջ եղած դրամով եղբորդ համար պատրաստվում էիր մանկական հագուստ գնել...

ՀՌԻՓՍԻՄԵ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԱՆԸ ԵՎ ԻՐ ՄՈՐԱՔՈՒՅՐԸ

Քույրս՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՍՈՒՐԵՆԻ ՄԻՆԱՍՅԱՆԸ (ԷԼԲԱԿՅԱՆ) ծնվել է 1945 թ., օգոստոսի 31-ին, Լենինականում։ Աշխատում էր Հղկող հաստոցների գործարանում որպես վերելակավարուհի։ Տուն էր եկել ընդմիջման ժամին, երբ բարձրացավ երկրաշարժի հուժկու ալիքը։ Ռուզաննան զոհվեց, թողնելով երեք որբերի։ Լավ մայր էր։ Անբուժելի վիշտ թողեց։ Տանըր էր նրա վրա ընկած ծածկասալը։ Մինչև կփշրբեին այն, մինչև կկտրեին ամրանների շշերը, քույրս ժամեր անց այլևս չկար...

ԱՐՄԱՆ ՍԱՄՎԵԼԻ ՋՈՒՀԱՐՅԱՆԸ ծնվել է 1981 թ. հուլիսի 10-ին, Լենինական քաղաքում։ Սովորում էր

№ 9 միջնակարգ դպրոցի առաջին դասարանում, Ուներ գեղեցիկ ձեռագիր։ Սիրում էր կարդալ, արտասանել, զբաղվել սպորտով։ Այդ օրը եղբորը շտապեցնում էր, որ իրեն շուտ տանի դպրոց, պատրաստվում էր «Այբբենարանի» հանդեսին։ Առօրյա խաղաղ զանգի տեղ ողբանչեցին աղետի տագնապալի զույժերը

աշխարհով մեկ։

Սիրելի Արման, իմ անգին որդի, աշխարհում այսքան, ինձ ոչինչ չմնաց, քանի դեռ կանք ես և հայրդ, շնչում ենք, մշտապես կայցելենք քեզ, թարմ ծաղիկներ կբերենք՝ արցունքներով կթրջենք շիրմաթումբդ։

ՍԱՄՎԵԼ, ՀՌԻՓՍԻԿ ՋՈՒՀԱՐՅԱՆՆԵՐ

ԴԱՎԻԹ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Գ ի ն ե տ ո ւ ն է ր . . .

Գինետուն էր, սրտի սափրեն բաց արած՝
Դուզուկահարն է մրմնջում յուրեանայն—
Նրանց համար, որ գնացել են անդարձ՝
Հոգեհանգիստ է մատուցում յուրեանայն։

Կա՞յծ էր, թե շողն հոգիների այն անմեռ,
Որ իջել էր՝ գոց կոպերի դալուկին,
Թե՞ արցունքն էր մանուկների վաղամեռ,
Որ սահում էր տաք շիթերով՝ դուդուկին։

Ու սահում էր դուդուկից՝ սիրտը նրանց,
Ովքեր կարճել՝ գավաթներին հոգեհեն,
Հոգեկանչի հուրմերի պես վերացած
Անցնում էին մահու սահմանը արդեն։

Ու թվում էր, թե սուգ չկա սգի մեջ,
Թե լույսն ասռծո՝ անյուններին է իջել,
Կյանքը՝ ծանր ցավի շղթա է անվերջ,
Կյանքը, իրոք, սատանան է անուշ՜։

Երանի էր տալիս պարողը այնտեղ—
Գինետան մեջ, մեռածներին այն բոլոր,
Որ հանգչեցին աղետի մեջ այն անեղ
Ու չապրեցին հետո խեղված ու մոլոր։

Ցա՞վ էր, թե շողն հոգիների այն անմեռ—
Թեկվել նրանց նախատների դալուկին,
Թե՞ հրաժեշտն էր մանուկների վաղամեռ
Մերը՝ այտերին ու մերը սահում շրթունքին։

ՌՈԲԵՐՏ ԻԳԻԹԻ ՄԻՆԱՍՅԱՆ

Ծնվել է 1935 թ. Լենինականում։ Սովորել և ավարտել է № 14 դպրոցը։ Խորհրդային բանակում ծառայությունից հետո աշխատանքի է անցել տեքստիլ կոմբինատում, իսկ 1962 թ.-ից մինչև չարաբաստիկ երկրաշարժը՝ վերլուծակաց սարքերի փորձնական գործարանում։ Այստեղ կընքեց իր մահկանացուն։

Դառն է եղել նրա ճակատագիրը։ Ժամանակից շուտ կորցրել է երիտասարդ կնոջը, մեծ դժվարություններով պահել մեծացրել է իր 3 երեխաներին, ուսումի է տվել և ամուսնացրել, լինելով նրանց համար և հայր, և մայր։ Նրան չէր վիճակված տեսնել իր տքնանքի բերքը, իր երեխաների ուրախությունն ու բախտավորությունը։

ՌԱՖԻԿ ՄԵԴՐԱԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ծնվել է 1946 թվականին Ախուրյանի շրջանի Սարիար գյուղում։ 1973 թվականին ավարտել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի Լենինականի մասնաճյուղը։ Ազատ ժամերին սիրում էր զբաղվել շախմատով։ Ռաֆիկը իր ցանկությամբ մեկնեց Աֆղանստան աշխատելու։ Աֆղանստանից բարեհաջող վերադարձավ տուն և երբ դժվարությունները մնացել էին թիկունքում ու ոչինչ չէր սպառնում նրա կյանքին, հազարավոր համաքաղաքացիների հետ ողբերգաբար զոհվեց աղետից։

ՌԱՖԻԿ ԿԱՌԼԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ծնվել է 1973 թվականին Լենինական քաղաքում։ Սովորում էր Արտյոմ Պետրոսյանի անվան դպրոցի 9-րդ դասարանում։

1988 թ. սեպտեմբերի 12-ին նշեցինք եղբորս՝ Ռաֆիկի ծննդյան 15 տարին։ Իմ անուշիկ եղբայր, չգիտեինք, որ երեք ամիս անց՝ դեկտեմբերյան այն չարաղետ սև օրը, հեռանալու էիր մեզանից՝ ընդմիշտ թողնելով մեր սրտերում խոր մորմոք ու անմոռաց վիշտ։ Ա՜խ երանի հիվանդ լինեիր չգնայիր դպրոց... Իսկ ինչքան էիր սիրում քո ընկեր, ընկերուհիներին, նրանք էլ՝ քեզ։ Ինչպե՞ս չսիրեին, երբ ուշադիր ու հոգատար էիր քո լորի նկատմամբ։

Քո քույր՝
ՄԱՔՐՈՒՀԻ ՏԻԳՐԱՆՅԱՆ

ԱԻԴԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՂԱՆԴԻԼՅԱՆ

Ծնվել էր 1941 թվականին։ Ընտանիքին նվիրված մայր էր, մարդամոտ, սիրված հարազատների ու ծանոթների շրջանում։ Ուներ երկու երեխա։

Համեստ, բարի, խելացի ու խորաթափանց հայացքով այս կինը հավատում էր կյանքին ու գալիքին, սիրում էր աշխատանքը։ Աշխատում էր արդարում որպես վերահսկիչ-հաշվապահ։

Աիդա Ղանդիլյանը զոհվեց աշխատատեղում, մնալով «ծածկած շուկայի» փլատակների տակ։

Ննջիր խաղաղ ... մայր, քո զավակների սրտում միշտ վառ կմնա քո հիշատակը։

ՀԱՍՄԻԿ ԳՐԻՇԱՅԻ ՄԱԿՈՒՆՑ

Ծնվել է 1972 թ. փետրվարի 8-ին, Լենինականում։

Նեկրասովի անվան № 13 միջնակարգ դպրոց էր հաճախում վեց տարեկանից։ Օրինակելի աշակերտուհի էր, չափից ավելի ընկերասեր և մարդամոտ։ Երազում էր մանկավարժ դառնալ, սիրում էր կար ու ձև, երաժշտություն և պար։

Այդ օրը նոր մտել էր արտադրամաս, երբ սկսվեց երկրաշարժը։ Կյանքի 17-րդ գարունը դեռևս չբոլորած աղջնակին գտան աղետից 6 օր անց՝ ընկերուհու հետ գրկախառնված։

ՀԱՍՄԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ծնվել է 1961 թ. Լենինականում, սովորել Խ. Աբովյանի անվան № 12 միջնակարգ դպրոցում։ Աշխատել է Ջկալովի անվան կարի № 2 միավորումում։ Մեքենայի առաջ էլ կնքեց մահկանացուն՝ չարաղետ երկրաշարժի պահին, երկու երեխաներին որբ թողնելով։ Որակյալ բանվորուհի ու հմուտ դերձակ էր, բարի և ազնիվ հարս, սիրող մայր. այդպիսին կմնա մարդկանց, հարազատների, մերձավորների և գործընկերների հիշողության մեջ։

ԱՐՓԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԱԶՈ ԳՐԻԳՈՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1966 թվականի մայիսի 19-ին, Բոգդանովկայի շրջանի Ջիգրաշեն գյուղում։ Դպրոցն ավարտելուց հետո սովորել է Բոգդանովկայի № 134 ուսումնարանում։ Այնուհետև ամուսնացել է նույն շրջանի փոքր Արագյալում, ու այնտեղ ապրել մինչև չարագույժ 1988 թվականը։ Ո՞վ մտքով կանցներ, որ այդ օրը մինչ այդ բարեհաճ ճակատագիրը դեմքը պետք է շրջեր 22-ամյա քնքուշ, բարեհոգի Նազոյից՝ որբացնելով միակ աղջկան և սիրելի ամուսնուն։

ԱՆՆԱ (ՄԱՐՈՒՍՅԱ) ՍԻՐԵԿԱՆԻ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ծնվել էր 1936 թվականին, Լենինականում։ Երկար տարիներ աշխատում էր Ջկալովի անվան կարի ֆաբրիկայում։ Բազմիցս արժանացավ պատվոգրերի, շքանշանների։ Երկու տարի էր, ինչ անցել էր ծերության կենսաթոշակի։ Դաժան երկրաշարժը պատուհասեց հայ ժողովրդին։ Աննայի սիրած ծննդավայրը ընկղմվեց խավարի մեջ։ Մնաց իր սեփական տան փլատակների տակ։ Ապրեց համեստ, օրինավոր և անկեղծ, այդպես էլ հեռանալով աշխարհից։

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՆՈՒԿԻ ՀՈՎ ՀԱՆՆԻՍՅԱՆԸ ծնվել էր 1950 թ. օգոստոսի 3-ին, Ղարիբջանյանում։ Ութամյա կրթությունը ստացել է Ղարիբջանյանի դպրոցում։ 1965 թվականին ամուսնացել է Լենինականում։ Ուներ երեք երեխա՝ 2 տղա և մեկ աղջիկ։ Սուսաննան բարի, աշխատասեր, իր ընտանիքին նվիրված մայր էր։ Աշխատում էր Շիրակացի փողոցի 9 հարկանի շենքում գտնվող հացի խանութում։ Երկրաշարժից առաջ վիրահատեցին Սուսաննայի երիկամները։ Կազդուրվելուց հետո նա նորից հաճախեց իր աշխատավայրը։

Դեկտեմբերի 7-ի առավոտյան վեր կացավ և իր դուստր Գայանեին զգուշացրեց, որ վատ երազ է տեսել։ Դուռը բանալիով փակեց ու տխուր գնաց աշխատանքի։ Այնտեղ էլ կնքեց իր մահկանացուն։ Չար արհավիրքը չխնայեց նաև նրան։ Սուսաննային գտան 17 օր հետո։

ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐԸ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

1988 թիվ, դեկտեմբերի 7, առավոտյան ժամը տասնմեկն անց քառասունմեկ րոպե։ Թոռներս նստած կինոնկար էին դիտում (ախ, այդ չարաբաստիկ կինոն շատ զոհերի պատճառ դարձավ), իսկ ես գրագրությամբ էի զբաղված։ Հանկարծ հրեղենական ուժեղ ցնցում, կարծես պատերը շուռ են գալիս։ Գիտակցելով, որ երկրաշարժ է, այն էլ շատ ուժեղ, թոռներիս դուրս բերեցի միջանցք՝ այնտեղից արագությամբ շենքից դուրս գալու համար։ Բայց...չհասցրինք, երկրորդ ցնցումն ավելի ուժգին էր և ուղղահայաց, որն էլ մեզ շպրտեց դեպի բակ։ Թե ինչ տեղի ունեցավ դրանից հետո, անհնար է նկարագրել։ Երբ ուշքի եկա, այլևս ոչինչ չէի տեսնում, թվում էր, թե կուրացել եմ, սակայն պարզվեց, որ հողով էր ծածկվել ողջ մարմինս։

Թոռներս չէին երևում, բղավում էի, ոչ մի արձագանք։ Իսկ երբ կրծքիս գամված ծանր քարը մի կերպ շուռ տվեցի մի կողմ, նեղլիկ անցք բացվեց ու լույս երևաց։ Դա ինձ հույս ներշնչեց։ Անզոր վիրավոր ձեռքով մի կերպ մեծացրի ու սկսեցի քարեր նետել դեպի դուրս՝ միաժամանակ նվաղած ձայնով օգնություն կանչելով։ Նպատակս մեկն էր՝ գտնել տասը և տասներկուամյա թոռներիս ու փրկել։ Գահավիժելու ընթացքում նրանք պոկվել էին ինձնից։ Հանկարծ ձախ կողմում նկատեցի նրանց, որոնք ամենից գառնուկների նման կարծես ննջում էին։ Երկար բետոնապատը ծածկել էր նրանց՝ կարծես հովանու դեր էր կատարում, առանց մազաչափ անգամ կպչելու նրանց մարմնի որևէ մասի։ Կարծես...Սակայն իրականում նրանք այլևս չկային...

Շտապ օգնությամբ Երևան հասցնելուց հետո չորս չորս ամիս բուժվել եմ։ Մոսկվայի ու Ֆրանսիայի բժիշկների շնորհիվ ապաքինվեցի և վերադարձա ավերված Կումայրի, որն արդեն փլատակների կույտ էր դարձել։

Երկրաշարժն իր հետ տարել էր հազարավոր անմեղ զոհեր՝ երեխաներ ու ծերեր, մայրեր ու աղջիկներ, քույրեր ու եղբայրներ, նաև՝ հյուրեր։

Հարց է ծագում, ինչո՞ւ, ին չու այդպես առաջվեց, չէ՞ որ

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

Նվիրում եմ Տանյա Հովհաննիսյանի հիշատակին

ԷՀՕԳԻԱ...

Երեկո է... Անծրևոտ երեկո,
Գիշեր է... Մառախլապատ գիշեր
Ու նրանց հետևող առավոտ լուսո...
Հրեշտակներն ազավնային անմեղությամբ
իջան դեպ երկիր...
Իջան մի նոճա փլուզման վրա,
Ճեղքեցին հողը...
արյունոտեցին թևերն իրենց.
Երբ հրեշտակները ճեղքեցին հողը
նոճա փլուզման...
Բարձրացրին նրանց ու տարան նրանց,
տարան իրենց հետ,
Տարան երկնային թագավորություն...
Աստծուն շատ էր պետք նոր հրեշտակներ...
ԼՈՒՍԻ ԱՂԱՅԱՆ

«ՄԱՅՐ» ԲՆՈՒԹՅԱՆ ԽԻՂՃԸ
(Սրտի անհուն կսկիծով նվիրում եմ 1988 թ. երկրաշարժի անմեղ նահատակների սուրբ հիշատակին)

Օ, «մայր» բնություն, այս ի՞նչ արեցիր,
Ինչո՞ւ դու հանկարծ սրտով կարծրացար,
Մեծ, սարսափելի ոճիր գործեցիր
Ու քո նենգամիտ քայլից քարացար։
Քեզ «մայր» են կոչում, բայց այդ ո՞ր մայրը,
Դահիճ է դարձել իր որդու համար,
Արդ, կների՞ քեզ մեծ տիեզերամայրը,
Որ մահ սփռեցիր չար կամքով համառ։
Տասներեք թիվը չար է ընդունված,
Բայց յոթը թիվը ավելի էր չար,
Որ չխնայեց նույնիսկ չծնված,
Դեռ աշխարհ չեկած «էակին» անճար։
Ինչ դառը կսկիծ ու անանց խռովք,
Անգութ բնություն, թողիր մեր սրտում,
Քեզ հազար բերան անեծք ու նզովք,
Մեր լեզվով կարկամ, մեր մտքով տրտում։
Ու խելագարվեց աստվածն արարիչ,
Քո վայրկենական վարքից խելահեղ,
Աչքերը մթնեց, որ բարին չարից,
Ջոկիր, քանդիր վանքն էլ փառահեղ։
Այս ի՞նչ չալարդեա գաշինք էր կնքած
Բնություն, քո և բիլ երկնքի հետ,
Որ ձեր չար խաղից գեռ ուշքի չեկած,
Մարդիկ սուզվեցին արյան ծովն հավետ։
Հազար հարմնացած դուստրեր մահացան,
Ու կիսամուրազ ուստրեր գնացին,
Անմեղ զոհերը գարձան հուշարձան,
Սուրբ չմոռացվող մասունք մնացին։
Կսկիծ ու մորմոք խառնվեցին իրար,
Ու հազար տեղով մեր սիրտը խոցվեց,
Հորդ արցունքներով մարդը լվացվեց,
Աղի ծով դարձավ արցունքը վարար։
Անխիղճ բնություն, դու ե՞րբ խաղկանք,
Դեռնատակ արիր ամեն սրբություն,
Այսքան էլ կսկի՞ծ, այսքան էլ տանջանք,
Ո՞ւր ես դու արդյոք սուրբ արդարություն։
Այս դաժան կյանքում ինչքան էլ ապրենք,
Նրանք անվերջ մեր կողքին են քայլում,
Լույս հոգիները համբարձվել երկինք,
Աստղեր են դարձել ու մեզ են ժպտում։
ԿԻՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺ

Օ, դու տառապյալ
Դու բազմաչարչար,
Իմ հայ ժողովուրդ,
Դարերի խորքից տանջվել ես անվերջ։
Եղեռնից հետո ահա նոր եղեռն
Բնական է նա, բայց և անարդար,
Ինչու, ինչու համար մենք
Միշտ պետք տանջվենք ու միշտ կործանվենք։
Դեկտեմբերի յոթ, դու դաժան, սև օր,
Մեկ րոպեում դարձրիր ողջ ավեր,
Գյումրին մեր ուրախ, Լենինականը նոր
Քանդիր, ավերիր բաղում նոր շենքեր։
Տասնյակ հազարներ գերեզման իջան,
Ամեն մի մարդ մի մարդու թաղեց,
Սոդոմ-գոմորից ավելի ահեղ
Հայ ժողովուրդը տեսավ նոր աղետ։
Այս մեծ աղետից աշխարհ ցնցվեց,
Բոլոր կողմերից ձեռքեր մեկնեցին
Անթիվ, անսահման տեխնիկա եկավ,
Փրկվեցին մարդիկ, տասնյակ հազարներ։
Օ, հայոց աշխարհ, քանդված օջախ,
Քանդողի տունը թող աստված քանդի,
Շատ ենք աղերսել ու աստծուն գիմել,
Ավաղ, աստված մեզ երբեք չի լսել։
Մեղա քեզ աստված, որ հանդգնում եմ,
Ինչո՞ւ ավազակ, թալանչի մարդիկ բարգավաճում են,
Իսկ աստվածավախ, աստծուն աղերսող,
Մեր ազգը արդար պետք միշտ տուժի։
ԱՆԴՐԱՆԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Այդ օրը պատրաստվում էինք տոնելու Էմմայի ծննդյան 35-ամյակը։ Բայց...

ԷՄՄԱ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ԱԴԱՄՅԱՆ)

Ծնվել էր 1953 թ., Հոկտեմբերյանում։ Ավարտելով միջնակարգ դպրոցը, 1970 թ. ընդունվեց Երևանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը։ Պա րապում էր թեթև ատլետիկայով։ Այդ տարիներին Հայաստանի մրցանակակիրներից էր։ Երևանում ուսանելու տարիներին էլ համդիպեցինք։ Ինստիտուտն ավարտելուց հետո ամուսնացանք։ Նա աշխատանքի անցավ Լենինականի Ալ. Խասանկյանի անվան № 26 միջնակարգ դպրոցում, որպես ֆիզկուլտուրայի ուսուցչուհի։

Երիտասարդ, կյանքով լի, ֆիզիկապես կոփված, ժպտերես, այդպիսին էր Էմման։ Նա իր պարզությամբ և անմիջականությամբ պատրաստ էր օգնելու բոլորին, նրանց հետ կիսելու ուրախությունն ու վիշտը։ Ընտանիքի իսկական մայր էր։

Նրան գտանք երկրաշարժից մեկ ժամ անց։ Դեռ ողջ էր։

12 ժամ կենաց ու մահու կռիվ էր տալիս փլատակների ճիրաններից ազատվելու։ Շատ էր ուզում ապրել, նպատակներ ուներ և հույսը չէր կորցնում։ Բայց նրա ֆիզիկապես կոփված մարմինն արնաքամ էր եղել։ Աչքերը հառելով վերև՝ ոչինչ չասաց։

Այսօր նա չկա, բայց կան ամուսինն ու երկու որդիները, որոնք շարունակում են ընտանիքի ավանդույթները և աշխատում են իրականացնել նրա կիսատ թողած իղձերն ու նպատակները։ Միայն այդպես կարելի է հավերժացնել Էմմայի վառ հիշատակը։

ԱՆԴՐԱՆԻԿ ԱԴԱՄՅԱՆ



ՍԱՄՎԵԼ ԿԱՍՅԱՆ

Սամվել, սիրելիս, դու նման չէիր ոչ մեկին, տարբեր էիր բոլորից՝ քո ողջախոհ ու մարդկային կեցությամբ, համեստ ու բարի բնավորությամբ։ Ավա՜ղ, դաժան աղետը շատ համարեց մեկ տարվա երջանկությունդ և միայն երկու ամիս քեզ վիճակվեց կրելու հայրության սուրբ վկայականը։ Ջլապինդ, ամուր ու առողջ կազմվածքդ չկարողացավ դիմանալ դաժան երկրաշարժին և դու դարձար կահույքի ֆաբրիկայի փլատակների զոհը։

Միանձարդ, սիրելիս, արդեն երկու տարեկան է և այն քան նման քեզ, ինչպես ջրի երկու կաթիլ։ Տա աստված, որ նա մեծանա ու դառնա քեզ նման բարի, աշխատասեր, ան շահախնդիր և բոլորի կողմից սիրված անձնավորություն։ ...Միայն թե լինի երջանիկ ու ճակատագրով չնմանվի քեզ...

Նվիրում եմ երկրաշարժին զոհված ամուսնուս եղբոր՝ ՍԱՄՎԵԼ ԿԱՍՅԱՆԻ հիշատակին։

Կանանց անշուք հիվանդանոց,
Սպասման լուռ սպասարան,
Եվ դու՝ շփոթ, ա՛հաբեկված,
Անհամբեր ու խիստ տագնապած
Քեզ համակած խինդ ու վախից,
Ամոթխած ու քիչ վարանոտ
Սպասման բութ տառապանքից...
Եվ ի վերջո պահն անորոշ
Ջնջեց, դարձավ որոշակի.
—Դե, աչքդ լույս, տղա ծնվեց։
Ծնվեց որդիդ, առաջնեկդ
(Որ միակը պիտի մնար),
Ծնվեց որդիդ, հայրացար դու—
Հպարտության ու հրճվանքի
Ալիքը չերմ
Վարդագունեց դեմքդ գունատ,
Մի տաք ժպիտ
Շուրթերիդ մեջ անմահացավ,
Աչքերիդ խինթ փայլը
Հարձավ շուշափելի։
Եվ...շատ չանցավ
Ավետաբեր այդ օրվանից,
Եկավ օրը սարսափների՝
Վայրկյանների ալեկոծված
Հարերքի մեջ՝
Ձո՛ր դարձար փլուզումի։
Փայլն աչքերիդ աղավաղվեց,
Սակավացավ, փլվեց, հանգչեց,
Հավերժ լռեց կանչն աչքերիդ,
Դարձար մի լուռ հողաբլուր՝
Անվերջ կարոտ միակ որդուդ
«Հայրի՞կ» կանչին...

ՍՈՒՍԱՆՆԱ ԿԱՍՅԱՆ

ՕՖԻԿ ՌՈՒԲԵՆԻ ՔՈՉԱՐՅԱՆԸ ծնվել է 1951 թ. նոյեմբերի 3-ին։ Սովորել է № 21 դպրոցում։ 1969 թ. միջնակարգն ավարտել է գերազանց գնահատականներով և ընդունվել թեթև արդյունաբերական տեխնիկում։ 1972 թվականին ավարտել էր այն կարմիր դիպլոմով։ Աշխատում էր Չկալովի անվան կարի ա/մ-ում, որպես հրահանգչուհի։ Չարաբաստիկ աղետից առաջ՝ երեք օր հիվանդ էր։ Այն հարահոսը, որտեղ հրահանգչուհին էր, եկ էր. Օֆիկը պարտքի զգացումով մեկնեց աշխատանքի, որտեղից այլևս չվերադարձավ, անավարտ թողնելով բազում երազներ, գործեր և չտեսնելով միակ դստեր երջանկությունը։

(ՎԱՐԴՈՒՀԻ ՔՅԱՐԱՄԻ ՂԱԶՈՅԱՆ)

ԴՈՒ ՄԵԶ ՀԵՏ ԵՍ, ՎԱՐԴՈՒՀԻ

Այս բարի, խելացի աչքերով կինը ծնվել էր 1951 թ. հունվարի 29-ին, Հայկավան գյուղում։ Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է բժշկական ուսումնարան։ Չաշխատեց սա կայն իր մասնագիտությամբ։ 1984 թ. ընդունվեց կոշիկի ֆաբրիկա որպես բանվորուհի, վայելեց կոլեկտիվի սերն ու հարգանքը։ Վարդուհին մեծացրեց երեք երեխաներ։ Շատ էր սիրում բոլորին, բայց մեծ հույսեր էր կապում մեծ աղջկա՝ Աղունիկի հետ։

1988-ին Աղունիկը ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտ։ Ինչպիսի երջանկություն էր Վարդուհու համար։ Բայց դաժան ճակատագիրը չթողեց, որ երկար տևեր մոր ուրախությունը։ Գնաց մեզանից մի աննման հայուհի, որն ամբողջացնում էր ժամանակակից հայ աղջկա բոլոր առաքինությունները։

ԼԵՅԼԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՏՈԿԱՆՔ, ԴԻՄԱՆԱՆՔ

Հարազատի մահն այնպիսի ծանրությամբ է նստում մարդու սրտի վրա, որ անգամ խոսելու տրամադրություն չի թողնում։ Իսկ եթե այդ խղճից զուրկ անկոչը չոքել է քո բազում հայրենակիցների սրտերին, մի դաժան հարվածով կյանքից զրկել տասնյակ հազարավոր մարդկանց, որոնց մեջ ճնշող մեծամասնությունը երեխաներ են... Ոչ խոսելու կարողություն, ոչ մանավանդ, գրելու տրամադրություն է մընում։ Բայց նաև լռել չես կարող, այդ լռությունից սիրտդ պայթելու փորձեր է անում։

Հիշում եմ, քառասունմեկի այս նույն ամսին ուսանում էի Թելավիի հետևակային ուսումնարանում։ Մի ազատ ժամի իմ համագյուղացի ու մտերիմ ընկեր Վահանի հետ նստել էինք մի ծառի տակ ու խոսում էինք մեր ընդհատված ուսման, չվայելած սիրո ու կարոտների մասին։ Հանկարծ Վահանն ասաց. «Գիտե՞ս թե ինչն է ինձ առանձնապես անհանգստացնում. մահից չեմ վախենում, հավատա մեռնելու ցանկություն էլ չունեմ, իհարկե։ Մեզնից յուրաքանչյուրը պարտավոր է տուն-տեղ կազմել, մի քանի երեխա ունենալ, իր կարողության սահմաններում նպաստել մեր՝ դարերի ճամփաներին մաշված ժողովրդի մեծացմանը, բազմացմանը։ Հիմա էլ մեջ է ընկել այս աներես պատերազմը։ Ինչ իմանաս, նա սև խաչ չի՞ քաշի մեր պայծառ երազանքների ճակատին...»։ Վահանի կասկածները տխուր հիմքեր ունեին։ Կիսամուրազ եղավ նա։ Ոչ ընտանիք, ոչ երեխա...

Այնքան մահեր եմ տեսել ռազմի ճամփաներին։ Կարծում էի, թե կարծրացել է սիրտս, ամեն մի հարվածի դիմանալ կարող է։ Սխալվել եմ չարաչար, և լավ է, որ այդպես չէ, ո՞ւմ է պետք քարացած սիրտը... Տասնյակ հազարերեխաներ, մեր կյանքի ծաղիկը, որոնք բացվելիս ու բույր պիտի տային մեր հող ու ջրին, փոքրիկ Հայաստանին ու մեծ աշխարհին։ Ավաղ, վաղամեռիկ հազարներ... Դիմանալու բան չէ։ Բայց պարտավոր ենք, իրավունք չունենք չտանելու այս ծանրագույն բեռը։ Մեր ժողովուրդը հարատևել է նաև իր լավատեսությամբ, կամքի անօրինակ ուժով, իր տոկունությամբ։ Կդիմանանք բնության այս տմարդի հարվածին ևս։ Կշահենք նաև այս ճակատամարտը։ Մանավանդ որ այս դժբախտության պահին մենակ չենք։ Ավելին, մենք երբեք չենք ունեցել կարեկցող-օգնողների մի այսպիսի բանակ, այսքան կատարյալ համատեղություն։ Մեր մեծ Միությանը բոլոր ժողովուրդները։ Աշխարհի տարբեր ծայրերում ապրող սրտացավ մարդիկ՝ Կանադայից մինչև Հնդկաստան, Նորվեգիայից մինչև Իրան։ Մեր փոքրիկ Հայաստանն այս օրերին դարձել է համաշխարհային համերաշխության ու գթասրտության կենտրոն։ Իսկական մեծ տան զավակներ։ Այո, աշխարհը մեր ընդհանուր տունն է... Ջանք չխնայենք այդ տան ապահովության ու բարեկեցության համար։ Երջանիկ զգանք մեզ ուրիշի ցավին կարեկից լինելու պատրաստակամությամբ։ Փլատակների տակից հայի կյանք փրկող ֆրանսիացու նման...

Տասնյակ հազարավոր զոհեր՝ միանգամից, միաժամանակ։ Ու դրանց մեջ նաև՝ մեր անվտանգությունը պաշտպանող, մեր մեծ հայրենիքի տարբեր ծայրերից եկած զինվորականներ, մեր ցավին օգնության շտապող, ավաղ, տեղ չհասած հարավսլավացի օդաչուներ։ Նաև՝ հարևան հանրապետությունից փախած հայրենակիցներ։ Վտանգից փախել, իրենց կյանքը ապահովագրել էին ուզում, և նրանցից քանի սը զոհ գնացին բնության սարքած այս տմարդի եղեռնին։

Մխիթարվենք նրանով, որ այս մահաշունչ օրերին էլ երեխաներ են ծնվել Լենինականում ու Կիրովականում։ Մին նույն է, կյանքը կհաղթի մահին։

Ուրեմն՝ գլուխ խոնարհենք մեր բազում նահատակների միացող շիրիմների առաջ։ Երախտագիտության խոսք ասենք մեզ օգնության ձեռք մեկնած մոտիկ ու հեռու բարեկամներին։

Ու տոկանք, դիմանանք։

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
(Արմենպրես)
17 դեկտեմբերի 1988 թ.

ՀՈԴԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հայկական ԽՍՀ կուլտուրայի մինիստրությունը ձեռնամուխ է եղել գեղարվեստական արժեքների էվակուացմանը Լենինականից և Սպիտակից, ինչպես նաև այլ բնակավայրերից։

Արդեն Երևան են տեղափոխվել Հայաստանի պետական պատկերասրահի Լենինականի մասնաճյուղի, Հայկական ԽՍՀ ժողովրդական նկարիչ Մինաս Ավետիսյանի Ջաջուռ գյուղում գտնվող տուն-թանգարանի ցուցանմուշները։

Լենինականի հայրենագիտական թանգարանի, խորհրդային ականավոր քանդակագործ Ս. Մերկուրովի տուն-թանգարանի ցուցանմուշներն ու նյութերը տեղափոխվում են Սարդարապատի ազգագրական թանգարան։

Մոտ օրերս Լենինականից ամբողջովին Երևան կտեղափոխվեն Ավետիք Իսահակյանի, Աբմեն Տիգրանյանի և Հովհաննես Շիրազի տուն-թանգարանների, ինչպես նաև պետական թանգարանի Սպիտակի մասնաճյուղի ցուցադրանքները։

17 դեկտեմբերի 1988 թ.
(Արմենպրես)

ԺԱՆՆԱ ՄԻՔԱՅԵԼԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1941 թ., պատերազմի ծանր տարիներին, Լենինականում։ Գերազանց գնա հատականներով ավարտել է № 10 դպրոցը, ապա՝ պոլիտեխնիկ ինստիտուտի մեքենաշինական ֆակուլտետը, որի երկրորդ շրջանավարտներից էր։ Աշխատել է կոմպրեսորների գործարանում որպես ինժեներ։ Մտածող ու առաջադեմ ինժեներ էր, կարդացած, նորարար։ Բազմիցս մասնակցել է համամիութենական մրցույթներին։ Ուրախանում և ապրում էր իր երկու տղաներով։ Երազում էր, որ տղաները ան պայման ունենան բարձրագույն կրթություն։ Գուրգենը գնաց հոր հետքերով, ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտ 1988 թ.։ Այդ օրը նրա երջանկությանը չափ չկար։ Ամպոտ, անձրևոտ, բայց ամենաուրախ օրն էր։ Ես և Գուրգենս ցուցակում կարդացինք անունը։ Ուրախությունից պարում էինք անձրևի տակ, չզգալով, որ թրջվել էինք։

Մյուս տղան՝ Արմենը, ավարտելով № 23 դպրոցը, ընդունվեց նույն ինստիտուտը 1990 ուստարում։ Մայրը չտեսավ երկրորդ տղայի ընդունվելը, բայց կատարվեց նրա երազանքը։ Նա իր մոտ ընկերներով մնաց գործարանի փլատակների տակ։

ԱՆԱՀԻՏ ՌՈԲԵՐՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Անահիտ Հովհաննիսյանը ծնվել է Լենինական քաղաքում, 1971 թվականի մարտի 29-ին։ Սովորել է № 34 դպրոցում։ Ուսման առաջավոր, սիրված աշակերտուհի էր։ Ուսումը շարունակեց թեթև արդյունաբերության տեխնիկումում։ Ինչպես էր երազում աշխատանք, ընտանիք, սեր...

Այդ դժնդակ օրը Անահիտը պրակտիկան անցկացնում էր կոշիկի ֆաբրիկայում, որ և մնաց փլատակների տակ։ Ժամը 23-ին նրան հանեցին փլակույտերի միջից։ Դեռ ողջ էր, հասցրեց տեղեկանալ եղբայրների մասին. «Արմենը և Վազգենը ողջ են»։ Մահվան ճիրաններում տվեց վերջին պատվիրանը՝ «Մա ջան, եղբայրներիս իմ կողմից ասա, որ քեզ լավ նայեն»։

Մեքենան պանում էր Երևան. շուտ, շտապ, արագ։ Ուղեկիցները վախով ու ափսոսանքով էին նայում ծաղիկ հասակում գտնվող աղջկան, որ դժվարանում էր դիմանալ։ Մահը շտապում էր ամեն ինչ վերջացնել ճանապարհին։



ՄԱՐՏԻՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԶԱՔԱՐՅԱՆ

ԶԱՔԱՐՅԱՆԸ ծնվել է 1931 թ. հունվարի 8-ին, բանվորի ընտանիքում։ 14 տարեկանում զրկվել է մորից։ Բազմանդամ ընտանիքի հոգսը ընկել է նրա ուսերին։

Ամուսնացել է, սակայն այս անգամ ևս բախտը չի ժպտացել նրան, զրկվել է սիրելի կնոջից և դարձել երեխաների միակ խնամողը։ Ամբողջ կյանքը նվիրել է շինարարությանը, ցանկացել է օգնել մարդկանց, բարիք գործել։ Հենց այդ բարի գործն էլ ավարիչ երկրաշարժի օրը դարձավ նրա մահվան պատճառը։ Աստված տարբերություն չդնելով բարու և չարի միջև, իրար խառնելով թացն ու չորը, ավերեց ամեն ինչ, չթողնելով բարու ոչ մի նշույլ։ Սակայն, չկորցնելով հավատը Աստծո հանդեպ, մեր ապագայի հանդեպ, այժմ էլ աղոթում ենք ամեն զոհերի համար և աղաչում Աստծուց աշխարհին խաղաղություն և հոգիը հանդարտություն։

ՋՈՒԼԻԵՏԱ ԱՄԻՐԽԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ծնվել է 1961 թ., Կումայրի քաղաքում։ Սովորել է Շուշանիկ Կուրղինյանի անվան դպրոցում, այնու հետև ուսումը շարունակել է պոլիտեխնիկական ինստիտուտում։ Ավարտելուց հետո աշխատանքի տեղ գտավ գրադարանում։ Համեստ էր, ժպտերես, հետաքրքրասեր։ Ամուսնացած էր և ուներ 2 երեխա։ Երկրաշարժի դաժան օրը գլուխ ընվում էր աշխատանքի վայրում։ Ողբերգականորեն ընդհատվեց նրա կյանքի թելը, որը մնացին փոքրիկները։

ԱԼԻՆԱ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

Ընկերներից

ՀՐԱՉ ՄԱՆՈՒԿԻ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Ծնվել է 1937 թ. Լենինականում։ Դժվարին մանկության և պատանեկության տարիներին հաջորդում է ծառայությունը խորհրդային բանակում։

Զորացրվելուց հետո ամուսնանում է, սակայն դաժան ճակատագիրը թույլ չտվեց վայելելու նաև ընտանեկան երջանկությունը։ Երկրորդ աղջկա ծննդից հետո մահացավ կինը, իսկ մեկ ամիս անց նաև աղջիկը...

Զամուսնացավ և որոշեց ապրել իր դստեր հետ։ Սակայն դաժան ճակատագիրը որբացրեց նաև դստերը։ Երկրաշարժը վերջ տվեց Հրաչ Մելքոնյանի տանջված ու չարքաշ կյանքին...

ԵՂՈՒԱՐԴԱՍՅԱ ՄԱՆՈՒԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ (ՄԵԼՔՈՆՅԱՆ)

Ծնվել է 1938 թ., Ղուկասյանի շրջանի Ղազանչի գյուղում։ 1946 թվից տեղափոխվել է Լենինական, դեռևս ան չափահաս աշխատանքի է անցել գորգերի գործարանում։ Հետո ամուսնացել է և բնակություն հաստատել Ռուսաստանում։ Չորս երեխաների մայր էր, երբ մահացավ ամուսինը։ Անչափահաս երեխաների հետ նա վերադառնում է Լենինական։ 4 երեխաների հոգսը ուսերին աշխատում էր առանց հանգստի։ Երկու երեխաներին հաջողեց ամուսնացնել, սակայն չհասցրեց բոլորի ընտանեկան երջանկությունը տեսնել, զոհվեց աշխատանքի վայրում։

ՍՈՒՍԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ՊՈՂՈՍՅԱՆ)՝ ծնվ. 1959 թ. հունվարի 7-ին։

Աստված, մի՞թե ունես դու գոյություն։ Ամեն անգամ նայելով մորս հոսող արցունքներին, եղբորս թախծոտ ու տխուր աչքերին, անկախ իմ կամքից այս տողերն եմ մրմնջում և զարմանում, որ մեր այսքան վիրավոր ու ցավոտ փոքր սրտի մեջ ո՞վ է դրել այդքան մեծ սեր ու հավատ դեպի երկնավորը, որ հիմա էլ այսքան բանից հետո, էլի մեր հայացքները երկինք ենք նառում։

Մեր ընտանիքի փոքրիկն ու սիրելին էր իմ քույրիկը՝ մեր Սուսիկը։ Եվ կարծես թե երեկ էր, որ ավարտելով Դ. Աղայանի անվան դպրոցը, ինձ հետ եկավ ռեզինատեխնիկական գործարան։ Նա պուտաչ, բարակիրան, միշտ ծիծաղկոտ քույրիկս դարձավ մեր կոլեկտիվի սիրելին։ Եվ հպարտությամբ էր լցվում հոգիս, երբ ամեն կողմից լսում էի՝ «Ինչ գեղեցիկ քույրիկ ունես»։ Այնուհետև ամուսնացավ։ Նոր ընտանիքում ընդունեցին և սիրեցին ինչպես հարազատ աղջկա։ Կազմեց ծնողանց ու որդու մեր մի ընտանիք։ Մեկը մյուսի ետևից բերեց երեք աղջնակներ։ Եվ որպեսզի միշտ լինեն իր սիրասուն բալիկների կողքին, անցավ մանկամսուր-գործական աշխատանքի։ Եվ հիշում եմ, թե ինչ խինդ ու ուրախություն էր պատճառում ընտանիքին երրորդ աղջնակը՝ փոքրիկ ՆԱՐԻՆԵՆ, որն ընդամենը ապրեց 9 ամիս։

Եվ ահա բացվեց այդ սև առավոտը։ Ամեն օրվա նման, այդ օրն էլ ամուսնուն ճանապարհեց աշխատանքի, երեխաներից մեկին՝ դպրոց, մյուսին՝ մանկապարտեզ և այդտեղ էր, որ ամեն օրվա համեմատ կարծես թե շտապեց քույրիկս և շուտ լողացրեց փոքրիկ Նարինեին։ Չէ՞ որ ամեն օր այդ ժամերին զբոսանքի էր հանում ու հետո լողացնում։ Այդ օրը ինչո՞ւ շտապեց, որ երկուսի համար ճակատագրական եղավ։ Լողացնում էր փոքրիկին ու սկեսրոջը պատմում գիշերվա երազը, թե ինչպես է մտել լողասենյակ ու անփութորեն կորցրել մազերը, մտքում էլ վախենալով, թե ի՞նչ պատասխան պետք է տա ամուսնուն։ Ու սկեսուրը վախեցած ընդհատում է, թե՝ «Մի պատմիր, Սուսան ջան, վատ երազ է»։ Բայց ավաղ, իմ խեղճ քույրը արդեն տեսել էր, ու ո՞ւմ մտքով անցներ, թե այդքան շուտ պետք է կատարվեր։ Քնեցրել էր երեխային նրա ջարդածում և անցել էր լողանալու։ Եվ երբ ընկել էր այդ ահավոր ցնցումը, դուրս էր նետվել լողասենյակից ու վազել ննջասենյակ, դեպի երեխան։ Սենյակը փլվել էր պատից նը-րան, բայց ինչ մոգական ուժ կարող էր պահել մորը, որի երեխան վտանգի տակ էր։ Մտել էր ներս ու...

Իմ խեղճ քույրիկ, մի բուռ վարանեիր, շըփոթվեիր ու կանգ առնեիր, այդպիսի բան չէր լինի, չէին որբանա մյուս երկուսը, որոնց այնքան պետք էիր դու։ Միևնույնն է, չկարողացար փրկել փոքրիկ Նարինեին։ Հանեցինք չորրորդ օրը։

Ապրում էին Լենինգրադյան փողոցի № 9 շենքի 1-ին հարկում։ Քույրիկս հանել էր երեխային, գրկել էր նրան, սեղմել կրծքին, անցել էր ննջարանը, մտել ճաշասենյակ և վայրկյաններ՝ ու փրկված կլինեին, բայց ավաղ այդ վայրկյանները...

Այդ ժամանակ էր, որ Լենինգրադյան փողոցով անցնող եղբայրս կանգնեցրեց իրեն չենթարկվող մեքենան և իջնելով, իրեն գտավ փոշու ու թափվող քարերի մեջ ՝և երբ մի քիչ փոշին դադարեց, տեսավ որ չկա քրոջ բնակարանը։ Վիրավոր ոտքով, լալիս էր փլատակների վըրա ու կանչում քրոջը՝ չգիտենալով, որ իր 18-ամյա դուստրը՝ ԼՈՒՍԻՆԵՆ, նույն ժամին մնաց կոշիկի գործարանի փլատակների տակ, որտեղ իր ուսանողական պրակտիկան էր անցկացնում։ Եվ դա այն եղբայրս էր, որը 4 երեխա ունենալով հանդերձ, փողոցից գտավ ու տուն բերեց նորածին մի երեխա։ Եվ մինչ կինը վարանման մեջ էր, իսկ երեխաները ճիչ ու աղմուկով շըրջապատել էին այդ անօգնական էակին, եղբայրս վճռեց. «Պետք է պահեմ, որտեղ չորսը, էնտեղ էլ՝ հինգը»։ Եվ պահեցին։ Եվ լինելով տան ավագը, այնքան բարի, խելացի, հեզ ու համեստ Լուսինեն, որի սրտում այնքան սեր ու գորգուրանք կար, մոր հետ հավասար մայրական խընամք տվեց փոքրիկ Կարենին։ Այդ ժամանակ Լուսինեն սովորում էր Դ. Աղայանի անվան դպրոցի 10-րդ դասարանում և գրել էր մի շարադրություն, որ ցնցել էր բոլորին, թե ինչ խինդ ու ուրախություն, երջանկություն է բերել իրենց ընտանիքին Կարենը։

Լուսինեին գտանք միայն 7-րդ օրը։ Այնքան երազներ ուներ, այնքան բան կար նրա սրտում։ Եվ ամեն անգամ տուն մտնելիս չորս կողմն է նայում եղբայրս, որտեղ ամեն ինչ հիշեցնում է սիրելի դստերը։ Նրա պատառոտված պատերը, նըրա վրձնի աշխատանքը. չէ՞ որ Լուսինեն բարձր առաջադիմությամբ ավարտել էր նաև նկարչականը։

ՔՆԱՐԻԿ ՀՄԱՅԱԿԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ ծնվել էր 1956 թ. Լենինականում։ Ահավոր երկրաշարժից շատ ամիսներ հետո զոհ գնացին իմ երկու լուսե հոգիները՝ քույրս ու իր փոքրիկ աղջիկը։

Քնարիկս շատ բարի հոգի ուներ, մարդասեր էր, մարդամոտ։ Մի տարի չկար, ինչ դուրս էր եկել «Մագնիսահաղորդիչ» գործարանից, փոքրիկին խնամելու պատճառով։ Նրա կողքին շատ հեշտ էր ապրելը, իր մի հատիկ խորհրդով, մի կարեկից բառով, թեթև ու ուրախ ծիծաղով ամեն ինչ մոռացնել էր տալիս։ Քրոջս մոտից հեռանում էի իր նման կյանքից սիրահարված։ Բոլորին էր հասնում, մենակ ատոված չհասավ իրեն ու իր փոքրիկ անմեղին։

Նոր էին բնակարան ստացել «Էռանկյունի» թաղամասում։ Մենք էլ էինք ուրախացել, իրենց էլ։ Ապրում էին երջանիկ իրենց բալիկներով, հայ կնոջ մի լավ ու օրինակելի օջախ էր ծխում։ Երազներով մեծացնում էր աղջիկներին, նրանցով ուրախանում։ Անխնա տարան Քնարիս լուսե երազները։

Ընդհատվեց նաև երեք չըբոլորած ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԱԹԵՎԻԿԻՍ կյանքը։

Ինչ լուսե բալիկներ կորցրինք բոլորս։ Շարունակվում է կյանքը, ապրում են քրոջս երկու աղջիկները առանց մայրական գուրգուրանքի, իսկ թան կացին հարազատներ կորցնողները՝ կսկծացող սրտերով և նրանց վառ հիշողությամբ։

ԱՆԱՀԻՏ ԿԱՐԱՊԵՏԻ ՀԱԿՈԲՅԱՆ
(ծնված 1929 թ.)

Ոսկե ձեռքերի վարպետ էր ԱՆԱՀԻՏԸ։ Նա աշխատում էր կարի անհատական պատվերների ֆաբրիկայում։ Լավագույն դերձակուհին վարպետ-դաստիարակ էր, որակավորել էր շատ աշակերտների։ Սիրված տատիկը 1985 թվականից անցել էր կենսաթոշակի և խնամում էր միակ աղջկա երեխաներին։ Տերյան փողոցի № 89 շենքը, ուր ապրում էր Անահիտ տատիկը, իր փլատակների տակ ճզմեց բազում կյանքեր, այդ թվում նաև լուսանկարից տխուր հայացքով ձեզ նայող Անահիտ Հակոբյանին։

ՀԵՆՐԻԿ ՄԻՐԱՔԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
(ծնված՝ 1938 թ.)

Լուսանկարից նայող բարի և խոհուն հայացքով մարդը ՀԵՆՐԻԿՆ է։ Ծնվել է Սպիտակի շրջանի Գեղասար գյուղում, բանվորի ընտանիքում։ Սովորել և ավարտել է Սպիտակի ավտոխոզ-տեխնիկումը։ Ավարտելուց անմիջապես հետո մինչև դեկտեմբերի այն սև օրը աշխատել է տրակտորիստ-մեխանիզատոր։ Այդ օրը ժամը 11-ին տուն եկավ ճաշելու։ Գրկեց իր դստեր աղջնակին և ասաց. «Որ ծերացա, ինձ ջուր տվողը Օլյան է լինելու»։ Իսկ այդ պահին դղրդաց ամեն-ամեն բան ու փոքրիկ Թոռնիկին գրկած զոհվեց Հենրիկը։

ՕԼՅԱ ՅՈՒՐԻԿԻ ՀԱԲԵԹՅԱՆ

Ծնվել է Լենինականում։ Երիտասարդ ծնողների առաջնեկն էր։ Երկու տարեկան էր, զոհվեց պապիկի գրկում։

ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐԸ ՀԱՏՈՒՑՈՒՄ ԵՆ ՊԱՀԱՆՋՈՒՄ

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

1926 թվի երկրաշարժից հետո կառավարական հատուկ որոշմամբ Լենինականում արգելվել էր բարձրահարկ շենքերի կառուցումը որպես սեյսմիկ ակտիվ գոտի։ Քաղաքի ղեկավարները ինչո՞ւ չանտեսեցին այդ որոշումը և հանուն իրենց փառքի ու շահի կառուցել տվեցին ինը, տասը, նաև տասնվեց հարկանի շենքեր, որոնք էլ պատճառ դարձան այդքան զոհերի։ Տարիքով մարդիկ հիշում են, որ դեռևս Ա. Սավոյանին (ՀԿԿ Լենինականի քաղաքային կոմիտեի նախկին առաջին քարտուղար) առաջարկել էին քաղաքում կառուցել բարձրահարկ շենքեր՝ ժողովրդի բնակարանային պահանջները բավարարելու համար, վերջինս պատասխանել էր.

—Միայն իմ դիակի վրայով։

Այո, Սավոյանը սկզբունքային, ազնիվ մարդ և կոմունիստ էր և պաշտպանեց ժողովրդի շահերը։ Բայց ահա նրանից հետո եկած առաջին «ղեկավարը» բոլորովին անտեսեցին կառավարական որոշումները, շինարարների հետ համաձայնության եկան և դարձան հազարավոր անմեղ զոհերի պատճառը։

Նաև դուք, պարոնայք նախագծողներ ու մոնտաժողներ, ինչո՞ւ չեք գալիս ու պատասխան չեք տալիս, ինչո՞ւ չեք կանգնում ժողովրդի դատարանի առջև, չէ՞ որ «քարերը հավաքելու» ժամանակն է...

Ոմանք ասում են, որ երբ աղետն անցել է, այդ մասին խոսելն այլևս անիմաստ է։ Այո, աղետն անցել է, բայց՝ նայած ում համար։ Այն անցել է նրանց համար, ովքեր ոչնչով չտուժեցին, զոհեր չունեցան ու ոչինչ չկորցրեցին, դեռ ավելին՝ մի բան էլ օգտվեցին, թալանելով զոհ ունեցող հարկաններին, և, որպես «աղետյալ», օգտվեցին նըրանց հասանելիք օգնությունից։ Նրանց համար նույնիսկ աղետ չի էլ եղել...

Սգավորների համար աղետը չի անցել. ամեն անգամ, երբ նրանք գերեզմանոց են գնում, աղետը կրկնվում է։

Հարգելի խմբագրություն, ես մյուս աղետյալների, հատկապես զոհ ունեցողների անունից խնդրում եմ տպագրել այս հոդվածը՝ ի լուր «Կումայրի» ընթերցողների, որոնց թվում, իհարկե, կլինեն քաղաքի նախկին ղեկավարներ, վայ շինարարներ և գուցե գութ առաջանա նրանց սըրտերում ու զղջան իրենց հանցագործ արարքների համար։

ՍԱՇԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պատերազմի և աշխատանքի վետերան, ՌԻԿԼՄԻ-ի ժամկավարժ

ՀԱՍՄԻԿ ՓԱՅԼԱԿԻ ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆԸ ծնվել է 1954 թ.՝ ապրիլին։ Սովորել և գերազանց ավարտել է Մայակովսկու անվան միջնակարգ դպրոցը։ Անմիջապես ընդունվել աշխատանքի Չըկալովի անվան կարի ֆաբրիկայում, ուր 40 տարի աշխատում էր մայրը՝ Շուշիկ Տոնոյանը։ Ամուսնացած էր Աբրահամ Նուրիջանյանի հետ։ Ուներ 2 որդի, մեծը՝ 12, փոքրը՝ 1,5 տարեկան։ Բնակվում էր կարի ֆաբրիկայի կոոպերատիվ շենքում, Երևանյան խճուղու վրա։ Երկրաշարժի օրը ավագ որդին դիպվածով փրկվեց դպրոցի փլատակներից։ Մայրը աղետի մոտեցումը դիմավորեց մանկական կոնսուլտացիայի մոտ։ Մոտակա շենքից փախչում էին [illegible]։ Մնում է շենք և վայրկյան չանցած, շենքը փուլ է գալիս։

Ժամանակը չի մեղմել վիշտը, ապրում են կրծը սրտում հաշմանդամ ծեր մայրն ու հայրը։ Դժվար է համակերպվել մղձավանջային իրականության հետ, հաշտվել, որ իմ Հասմիկը չկա։

Հորաքույր՝ ԱՍՅԱ

ԱՐՄԱՆ ԱԲՐԱՀԱՄԻ ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆԸ ծնվել է 1986 թվականին։ Նա արդեն թոթով լեզվով խոսում էր, աշխույժ, խելացի երեխա էր։ Շատ էր սիրում հորը, որը երկրաշարժի ժամանակ քաղաքում չէր։ Համբուրում էր նրա նկարը և ասում, որ մյուսներն էլ այդ անեն։

ԳՈՀԱՐ ԵՐՎԱՆԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ ծնվել է 1968 թվականի նոյեմբերի 3-ին, Լենինականում։ Սովորել է № 32 դպրոցում։ Ավարտելով այն 1985-ին, ընդունվել է Լենինականի մանկավարժական ինստիտուտ, արդեն 4-րդ կուրսի ուսանողուհի էր՝ սիրված բոլորի կողմից։

Ես նրան տեսա, բայց երազիս մեջ՝
Ճերմակ շորերով, ճերմակ ամպի մեջ,
Թախծոտ հայացքով նայում էր նա ինձ,
Արցունքն աչքերին՝ ժպտում էր հեռվից։
Պարզել թևերը՝ կանչում էր նա ինձ,
Որ մի հրաշքով իջնեի ամպերից,
Ախ համբուրեի աչքերդ քույրիկ,
Մանր մազերդ, դեմքդ անուշիկ։

ՆԱՐԻՆԵ ԵՐՎԱՆԴՅԱՆ

Ո՞Վ ԷՐ ՄԵՂԱՎՈՐ...

Ճյուղս կոտրվեց
Երազիս՝ մեծ ծառ,
Թևերս փլվեց,
Չլսվեց մի բառ
Ցանկացա ծնել
Անլեզու մեռոն,
Մանկիկս հանգավ
Ջահած կերոն։
Շիրակ՝ դիմացիր,
Անմեղ զոհավոր
Ջավախք՝ միացիր,
Եղբայր սգավոր։
Շուրթերս թոշնեց
Քար համբուրելով,
Լեզուս կարկամեց
Վերքս լիզելով։
Երկունքի ցավով
Հողը գալարվեց,
Այդ ով իր դավով
Սուրբ հողը թունեց։
[illegible] կաթեց կարմիր
Հայ հողի վրա,
Անմեղ արյուն էր՝
Տեր իմ Զորավոր։
Քառասուն վայրկյան
Կինը աղերսեց.
Ձեռքերը պարզած
Օգնություն խնդրեց։
Անզգա դարձավ
Սերմիկը մանկան,
Իր սերմանողին
Արգանդը վիժեց։
Հողը պատռվեց՝
Աստված [illegible] փչիր,
Անաստված աստված։
Ով էր մեղավոր...
Ազգս մորթված...
Լսում ես, աստված,
Անխիղճ արարած։
Ես էլ եմ աստված,
Այս էր հնարած...
Եվ իմ ճակատին,
Այս գիրն էր գրած։
Որդի՛ս, արթնացիր,
Անմեղ թևավոր
Հայը չի մեռնում՝,
Սիրտն է վիրավոր։
Արթնացիր և տես՝
Անին նորավոր,
Սպասում է քեզ
Մուշը զորավոր։
Տես այս շենքերին,
Գյումրին վիրավոր,
Դու նորից բացվիր
Արև Նաիրի։
Ժպտա Հովունի
Շիրակ աշխարհին,
Ժպտա իմ մանուկ
Գալիք հույսերի։

ՍՈՍ ՄԱՆԱՆԴՅԱՆ

Ախալքալակ-Հովունի

№ 20 դպրոցի շենքը։
Լուսանկարը՝ Ա. ՄԱԿԱՐՅԱՆԻ

«ԿՈՒՄԱՅՐԻ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ
ԿՈՒՄԱՅՐԻԻ ՏՊԱՐԱՆ

ՊԱՏՎԵՐ № 2618